ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 փետրվարի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

11
(3042)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԻ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՄՈՒԼԻՆ

Անցած 10 օրում ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ ու մի ՔՊ-ական պատգամավոր դատի են տվել «Ժողովուրդ» օրաթերթին ու շտապում են բացատրել, թե այլընտրանք չունեն, պիտի թիմի ներսում իրենց «ճիշտը ապացուցելու համար» դատական հայց ներկայացնեն:

Նախ, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը դատական հայցեր են ներկայացրել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ, սակայն ծանուցումը դեռ չենք ստացել եւ չգիտենք՝ որ հրապարակումների համար:

Դատական հայց ներկայացնելու հրապարակային սպառնալիք է ներկայացրել նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը նրա համար, որ նյութ էինք հրապարակել, թե ինչպես է նա բալթյան երկրների խորհրդարանականների հետ հանդիպման ժամանակ սուր քննադատել ՌԴ-ին, ինչը դարձել է մեր ու ՌԴ-ի հարաբերությունների սրման եւս մեկ առիթ: Անգամ լուրեր հրապարակվեցին, որ ՌԴ Դաշնության խորհրդի ղեկավար Վալենտինա Մատվիենկոն Ալեն Սիմոնյանի հակառուսական հայտարարություններից հետո հրաժարվում է Հայաստան գալուց ու Ալեն Սիմոնյանի հետ հանդիպելուց: Այս գործով նույնպես դեռ ծանուցում չենք ստացել:

Երեկ ստացանք ԱԺ ՔՊ խմբակցության անդամ Հայկ Սարգսյանի դատական հայցը, որը դատապարտված է պարտության ի սկզբանե, քանի որ անգամ հայցի մեջ Հայկ Սարգսյանն ու իր իրավաբանը խուսափել են օգտագործել «ՔՊ» կամ «Նիկոլ Փաշինյան» անունները:

Այսպիսով՝ Հայկ Սարգսյանը նյութը կտրել է կոնտեքստից եւ մի քանի նախադասություններ, կիսատ վերցրած, զրպարտություն է համարում: Օրինակ՝ հոդվածում գրված է, որ «Կուսակցության ներսից «Ժողովուրդ» օրաթերթին արտահոսք ապահովեցին այն մասին, որ Հայկ Սարգսյանը, որ երեք նիստի ժամանակ է՝ խոսում է անտառների ոչնչացման թեմայից, իրականում փայտանյութ ներկրողների հետ բիզնես հետաքրքրություններ է ձեւավորել»: Սակայն Հայկ Սարգսյանը հայցի մեջ նախադասության սկիզբը ջնջել է՝ հեռացնելով հետեւյալ մասը՝ «Կուսակցության ներսից «Ժողովուրդ» օրաթերթին արտահոսք ապահովեցին այն մասին...»:

Մյուս նախադասությունը հոդվածի սկսվում է այսպես. «Հիշեցնենք, որ հունվարի 9-ի երեկոյան ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը դարձյալ ծառահատումների մասով սուր ելույթ է ունեցել ու մեղադրել մարզպետ Հայկ Ղալումյանին՝ Տավուշի անտառները ոչնչացնելու համար: Սա դարձել էր փոխադարձ վիրավորանքների ու քաշքշուկի պատճառ: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՔՊ-ականներն անգամ իրար հարվածել էին հենց Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ, եւ վերջինս էլ թողել ու հեռացել էր»: Բայց Հայկ Սարգսյանը զրպարտություն է համարում այս նախադասության միայն մեջտեղի հատվածն այն դեպքում, երբ հստակ գրված է, որ սա հիշեցում է 4 օր առաջ հրապարակված մի հոդվածի մասին, որը որեւէ մեկը չի հերքել: Ի դեպ, պատգամավորը զրպարտություն չի համարում, որ Նիկոլ Փաշինյանը թողել հեռացել է քաշքշուկի ժամանակ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Նախկին ՔՊ-ականներ Հովիկ Աղազարյանն ու Հակոբ Ասլանյանը պատրաստվում են «բումի»: Այս օրերին ՔՊ-ից հեռացված, այժմ անկախ պատգամավորները նախապատրաստական թոհուբոհի մեջ են. պատրաստվում են փետրվարի 8-ին կայանալիք «Միացյալ ազգային սոցիալիստական» կուսակցության համագումարին, որը կայանալու է Երեւանի «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում: Պատգամավորները, համագումարին ընդառաջ, հանդիպումներ են ունենում հանրային եւ քաղաքական դեմքերի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ասլանյանն ու Աղազարյանը այդ օրը իշխանափոխության կոչերով են հանդես գալու: Մասնավորապես, Հովիկ Աղազարյանը հայտարարելու է, որ հաջորդ ընտրություններին, լինեն դրանք հերթական, թե արտահերթ, որեւէ դեպքում չպետք է թույլ տալ Նիկոլ Փաշինյանի վերարտադրումը: Աղազարյանն ու Ասլանյանը կհայտարարեն նաեւ ընտրություններին մասնակցելու իրենց պլանների մասին: Ի դեպ, «Ժողովուրդի» տեղեկություններով՝ տարբեր ժամանակներում ՔՊ-ից նեղացած ու կուսակցությունը լքած շատ անդամներ միացել են Հովիկ Աղազարյանի եւ Ասլանյանի նորաստեղծ կուսակցությանը, որոնց կտեսնենք համագումարին:

Ինչպես հայտնի է, Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրելու համար հայտարարել է հերթական մրցույթը: Թեկնածուների փաստաթղթերի ընդունման ժամկետը փետրվարի 6-ն է: Արդյունքում մնացել է 2 օր, ու որեւէ մեկը մինչ այս պահը չի ներկայացրել իր թեկնածությունը: Ասել է թե՝ ՀՀ-ում որեւէ մեկը ցանկություն չունի Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալու: Նկատենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար երկրորդ անգամ է անցկացվում մրցույթ, քանի որ առաջին մրցույթում միակ թեկնածու Ռաֆայել Երիցյանը չհաղթահարեց մրցույթի արդյունքները եւ չընտրվեց: Մրցույթը բավականին թեժ անցավ, անգամ հանձնաժողովի անդամները լարված խոսակցություններ ունեցան: Եվ ահա հերթական անգամ է մրցույթ հայտարարվել, ու մինչ այս պահը չկա թեկնածու: Փաստորեն, որեւէ մեկը չի ցանկանում լինել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, քանի որ նախագահին (արդեն նախկին) մի գիշերվա մեջ SMS-ի արդյունքում ազատեցին պաշտոնից:

Թրամփի վարչակազմը հերթով փակում է ամերիկյան՝ միջազգային օգնություն հատկացնող առաջատար կառույցները: Երեկ հայտնի դարձավ, որ փակվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) Վաշինգտոնի կենտրոնական գրասենյակը, որը հիմնականում պատասխանատու է այլ երկրներին օգնության համակարգման համար: Կազմակերպության աշխատակիցներին կեսգիշերն անց էլ. փոստով ծանուցում են ուղարկել՝ աշխատանքի չներկայանալու վերաբերյալ: Ի դեպ, գրասենյակը փակելը Թրամփի եւ ամերիկացի միլիարդատեր Իլոն Մասկի համատեղ որոշումն է, որն արվել է պետական ծախսերի կրճատման համատեքստում: «Այդ կազմակերպությունը ղեկավարվում է արմատական խելագարների խմբի կողմից», - ավելի վաղ հայտարարել էր Դոնալդ Թրամփը: «Ժողովուրդ» օրաթերթը Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանից հետաքրքրվել է, թե ինչ ճակատագիր է սպասվում ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան գրասենյակին եւ ծրագրերին, որոնք այս կազմակերպության աջակցությամբ են իրականացվում: «Տեղեկությունները շատ հակասական են, երբեմն որոշ հուսադրող հայտարարություններ են ստացվում, երբեմն էլ Թրամփի եւ Իլիոն Մասկի հայտարարություններն ենք լսում, որ վճռական են տրամադրված՝ փակելու կազմակերպությունը: Ինչ վերաբերում է USAID-ի հայաստանյան գրասենյակին, ապա ես չեմ կարող իրենց փոխարեն որեւէ բան ասել, իրենք էլ մեկնաբանություն չեն տալիս: USAID-ի ծրագրերից օգտվող կազմակերպություններից մեկը Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն էր, դրամաշնորհ ունեինք, բայց հունվարի 25-ին մեզ internews Հայաստանից տեղեկացրին, որ սառեցվել է ծրագիրը 90 օրով, ոչ մի ծախս չի իրականացվելու՝ մինչեւ նոր հրահանգներ լինեն: Ապագայի համար որեւէ հստակ տեղեկություն չկա, անորոշ է՝ կշարունակվի՞ ծրագիրը, թե՞ ոչ: ԱՄՆ դատախազությունն իր եզրակացությունն է ուղարկել դատարան, որ այս որոշումը հակասում է օրենսդրությանը»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՆԵԼ Հ. ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԾ ՈՒԺԸ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ամ անկախ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատգամավորը բացահայտումներ արեց աղմկահարույց հաղորդագրությունների, իր կողմից արտահոսքի եւ Փաշինյանի կայացրած միանձնյա որոշումների մասին:

-Պարոն Աղազարյան, այս պահին նոր կուսակցություն եք հիմնում եւ փետրվարի սկզբին նոր համագումար ունեք: Գիտենք, որ համագումարը ցանկանում եք անցկացնել հանդիսավոր կերպով: Ովքե՞ր են ներկա լինելու համագումարին, ովքե՞ր են ընդունել հրավերը: Խոսքը, հիմնադիր անդամներից բացի, այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչներին հրավիրելու մասին է:

-Ոչ ոքի չենք հրավիրել: Ով էլ գա՝ սիրով կընդունենք, սակայն ոչ ոքի չենք հրավիրել: Նման պատասխանատու միջոցառումներ կազմակերպելու փորձ չունենք, իսկ հյուրերին հրավիրելը եւ դիմավորելը, պատշաճ կերպով միջոցառումն անցկացնելը պահանջում է շատ լուրջ աշխատանք, որը չենք հասցնի: Հետեւաբար, նախաձեռնող խմբի հանդիպման ժամանակ որոշել ենք, որ ոչ ոքի չենք հրավիրելու: Լրագրողներին ենք տեղեկացնելու, որ ով հետաքրքրված է՝ ամսի 8-ին՝ ժամը 10:00-ին, գա «Մարիոթ Արմենիա» հյուրանոց լուսաբանելու համար:

-Փաստորեն ոչ մի քաղաքական ուժի ներկայացուցիչ հրավիրված չէ, ո՛չ իշխանությունից, ո՛չ ընդդիմությունից:

-Ոչ. ոչ ոքի չենք հրավիրել:

-Իսկ ունե՞ք կուսակցության ապագա անդամների ցանկ, ովքեր ցանկություն են հայտնել՝ Ձեր կուսակցության մի մասը դառնալու. հայտնի դեմքեր, քաղաքական անցյալ ունեցող մարդիկ:

-Հանրության լայն շրջանակներին հայտնի ոչ մի դեմք չկա: Կան մարդիկ, որոնք այս պահին իրենց հասարակական սոցիալական վիճակին համապատասխան ակտիվություն ունեն, կան օրենքով սահմանված քանակն ապահովող մարդիկ:

-Ինչի՞ց եք սկսելու, պարոն Աղազարյան, ո՞րն է Ձեր առաջին գործողությունը: Օրինակ՝ հիմա մեծ պայքար է ընթանում տրանսպորտի թանկացման դեմ: Կուսակցությունը ի՞նչ է պատրաստվում անել, արդյոք դրա շո՞ւրջ եք սկսում ձեր պայքարը, թե՞ այլ ոլորտից:

-Քանի որ առիթը եղավ, նշեմ. տրանսպորտի հետ կապված պայքարելու բան չունենք: Ես կարծում եմ, եւ ժամանակին ասել եմ Տիգրան Ավինյանին, որ իր մշակած ծրագրերը ձախողվել են թե՛ տրանսպորտի, թե՛ աղբահանության հարցում՝ անկախ նրանից, թե ինչ գին կդնեն: Կար հաջող համակարգ, մասնավոր սեկտորն էր դա: Որոշակի պայմաններ էր դրվում, չափանիշներ՝ ավտոբուսների վարորդների հագուկապի համար, այդ դեպքում սեփականատերերը պարզապես եկամուտ էին ստանում եւ հարկ վճարում պետությանը, որի հաշվին պահվում էին այն գծերը, որոնք քիչ են ծանրաբեռնված:

Մենք պայքարելու ենք ընտրությունների ֆորմատով եւ կարեւորագույն հարցերից մեկը մեզ համար, որի շուրջ համաձայնության չենք գալիս, Նիկոլ Փաշինյանի՝ որպես վարչապետի նկատմամբ մեր վերաբերմունքն է:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՁԵՌՔԻՑ ՊԱՐԳԵՎ ՉՎԵՐՑՐԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացել է, որ աշխարհահռչակ ֆուտբոլիստ Հենրիխ Մխիթարյանը, ով իր՝ 2022 թվականի մարտի 3-ի հայտարարության համաձայն լքեց Հայաստանը, չի եկել անգամ պետական պարգեւ ստանալու: Իշխանությունները չեն կարողացել նրան Հայաստան բերել:

Այսպիսով, հաջողակ եւ հայրենասեր ֆուտբոլիստ Հենրիխ Մխիթարյանը հրաժարվել է գալ Հայաստան ու մասնակցել 2024 թվականի ՀՀ լավագույն մարզիկների պարգեւատրման արարողությանը: Ֆուտբոլիստը, հիշեցնենք, երկու տարի առաջ հայտարարեց, որ Հայաստանի ազգային հավաքականում ավարտում է կարիերան՝ հեռանալով Հայաստանից, քանի որ ո՛չ Մխիթարյանի, ո՛չ նրա մոր՝ Մարինա Թաշչյանի նկատմամբ ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանն ու նրա թիմակիցները լավ վերաբերմունք չցուցաբերեցին՝ հեռացնելով անգամ ՀՖՖ գործկոմից:

Եվ այսքանից հետո Հենրիխ Մխիթարյանը փաստացի մերժել է Նիկոլ Փաշինյանին ու նրա իշխանությանը՝ չգալով եւ անգամ ներկայացուցիչ չուղարկելով, որ իր փոխարեն ստանան պետական պարգեւը:

«Ժողովուրդ» օրաթերթը սա փաստող կադրեր գտավ նաեւ հենց պաշտոնական հաղորդագրության մեջ:

Կառավարության պաշտոնական հոլովակում ասվում է, որ Մխիթարյանը լավագույնն է հռչակվել առցանց քվեարկությամբ, սակայն գործադիրը, փաստացի, չի կարողացել գտնել նրան, խնդրել, համոզել, որ գա Հայաստան:

Արդյունքում, Նիկոլ Փաշինյանը հնարավորություն չի ունեցել պահանջված ֆուտբոլիստին հանձնել պարգեւը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՌԴ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՈՒՄ

Ադրբեջանի իրավապահ մարմինները Ռուսաստանի Դաշնությանը սահմանակից շրջաններում հանցավորության դեմ պայքարի համալիր օպերատիվ-հետախուզական եւ կանխարգելիչ միջոցառումներ են իրականացնում: Այս մասին տեղեկանում է ՏԱՍՍ գործակալությունից:

«Սահման-վահան» ծածկանունով գործողությունն իրականացվում է Ադրբեջանի եւ Ռուսաստանի ներքին գործերի նախարարների միջեւ ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածության համաձայն:

Գործողությունը կտեւի մինչեւ փետրվարի 10-ը: Դրա շրջանակներում ոստիկանական դիրքեր են տեղակայվել Ադրբեջանի հյուսիսում եւ հյուսիս-արեւմուտքում գտնվող մի շարք շրջաններում:

Նշվում է, որ ըստ Azertag գործակալության, «գործողությունների հիմնական նպատակն է սահմանային համագործակցության հարցերի վերաբերյալ ընդունված որոշումների իրականացումը, անդրազգային կազմակերպված հանցավոր խմբավորումների եւ ահաբեկչական կազմակերպությունների անդամների բացահայտումն ու վնասազերծումը, կազմակերպչական եւ գործնական համալիր միջոցառումների իրականացումը զենքի, պայթուցիկ նյութերի եւ սարքերի, թմրանյութերի փոխադրման ուղիները բացահայտելու եւ կանխելու համար»:

«ՎԵՐԱԴԱՐՁ 100 ԴՐԱՄՆԵՐԻՆ ԱՆՀՆԱՐ Է». ԱՎԻՆՅԱՆ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը շնորհակալություն է հայտնել քաղաքացիներին տրանսպորտային ոլորտում քաղաքապետարանի վարած քաղաքականությանն աջակցելու համար:

«Միասնական տոմսային համակարգին անցումը բարդ ճանապարհ էր, բավական բարդ փուլերով ենք անցել, եւ ես իրապես շատ ուրախ եմ, որ մենք ընդհանուր մեկ էջի վրա ենք, հասկանում ենք՝ ինչ է տեղի ունենում, ինչի համար է տեղի ունենում: Միասնական տոմսային համակարգի ներդրումն առաջին հերթին Երեւանում որակյալ տրանսպորտ ունենալու համար է արվում»,- ասել է քաղաքապետը:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՓԵՏՐՎԱՐԻ 3-7-Ը ԿԳՏՆՎԻ ԱՄՆ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ փետրվարի 3-7-ն աշխատանքային այցով կգտնվի Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

ՀՀ կառավարությունից հայտնում են, որ այցի շրջանակներում վարչապետը Վաշինգտոնում կմասնակցի 5-րդ ամենամյա Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովին, ինչպես նաեւ «Ազգային աղոթքի նախաճաշին»:

Նախատեսված են նաեւ մի շարք այլ հանդիպումներ:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանն անդրադարձել է տարածվող տեղեկություններին, թե իբր ուղեւորափոխադրումների համար բանկային քարտերից հավելյալ գումարներ է գանձվում:

Գրիգորյանը վստահեցրեց, որ նման դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաճախ քաղաքացիներն օգտվում են, ինչ-ինչ պատճառներով, այդ թվում միջոցների անբավարար լինելու պարտք է ձեւավորվում եւ հետագայում պարտքն է գանձվում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 670 ՀԱԶԱՐ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼ ԿԱ

Ռուսաստանի տարածքում անօրինական կերպով գտնվում է 670 հազար մարդ, նրանց մոտ կեսը կանայք եւ երեխաներ են: Այս մասին «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ի հետ զրույցում հայտարարել է ՆԳՆ ղեկավարի առաջին տեղակալ Ալեքսանդր Գորովոյը: Այս մասին տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Մինչեւ 2025 թվականի ապրիլի 30-ը նրանք իրավունք ունեն դիմել պրոֆիլային գերատեսչություններին եւ ներքին գործերի մարմիններին՝ իրենց իրավական կարգավիճակի հարցը կարգավորելու համար»,- ասվում է հրապարակման մեջ:

Եթե իրավական կարգավիճակը չհաջողվի կարգավորել, օտարերկրյա քաղաքացիները ստիպված կլինեն լքել Ռուսաստանը, եզրափակել է Գորովոյը:

Ավելի վաղ ՌԴ կրթության նախարարությունն առաջարկել էր փաստաթղթերի նոր ցանկ՝ օտարերկրյա քաղաքացիների երեխաներին ռուսական դպրոցներ ընդունելուն առնչվող: Փաստաթղթի համաձայն՝ այժմ ուսումնական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ է հաստատել Ռուսաստանում ոչ միայն երեխայի, այլեւ նրա օրինական ներկայացուցիչների բնակության իրավունքը:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱԿՑԻԱՆԵՐԸ ՆՈՐ ԹԱՓ ԵՆ ԱՌԵԼ

Վրաստանում բողոքի ակցիաները կրկին թափ են առել: Ոտքի ելած ցուցարարները պահանջում են նոր խորհրդարանական ընտրությունների անցկացում: Հազարավոր ցուցարարներ փակել են մայրուղին երկրի մայրաքաղաք Թբիլիսիի ծայրամասում:

Ոստիկանությունը ձերբակալել է հակակառավարական բողոքի ակցիաների մի քանի մասնակիցների: Ինչպես հայտնում է Reuters-ը, ձերբակալվածների թվում է Նիկա Մելիան՝ երկրի ամենամեծ ընդդիմադիր՝ «Հանուն փոփոխությունների կոալիցիա»-ի առաջնորդը: Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ ձերբակալվել է նաեւ Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գեորգի Ուգուլավան:

Հիշեցնենք, որ 2024 թվականի նոյեմբերի 28-ին Եվրախորհրդարանը հրաժարվեց ճանաչել Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները եւ կոչ արեց պատժամիջոցներ կիրառել «Վրացական երազանքի» առաջնորդների դեմ: Նույն օրը Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Վրաստանը կհրաժարվի Եվրամիությանն անդամակցելու բանակցություններից մինչեւ 2028 թվականի վերջ: Սրանից հետո երկրում բողոքի ցույցեր են սկսվել, որոնք շարունակվում են մինչ օրս. ցուցարարները պահանջում են չեղարկել ընտրությունների արդյունքները եւ անցկացնել նոր ընտրություններ:

ՈՐՈՇՈՒՄԸ ԹԵՐԻ Է

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ է ՄԵԿՆԵԼ ԱՎԵԼԻ ՎԱՂ, ՔԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը, համաձայն ՀՀ վարչապետի որոշման, 2025 թվականի փետրվարի 1-7-ը աշխատանքային այցով կգտնվի Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Վաշինգտոնում:

Սույն որոշման 1-ին կետում նշված գործողության մեջ գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության վարչապետի պարտականությունների կատարումը դնել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության կազմում ընդգրկել նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Լիլիթ Մակունցին:

Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) գործուղման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ օդանավակայաններում սպասարկման ծախսերը, համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի, կատարել՝

1) Նիկոլ Փաշինյանի, Նազելի Բաղդասարյանի, Կարեն Գասպարյանի, Արմեն Խաչատրյանի, Ալեքսանդր Աբրահամյանի, Արման Շահինյանի, Տիգրան Մեհրաբյանի օրապահիկի, ճանապարհածախսի, ինչպես նաեւ հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված անձանց գիշերավարձի, ինչպես նաեւ պատվիրակության ներկայացուցչական եւ փոխադրամիջոցների վարձակալման հետ կապված ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին.

3) Արարատ Միրզոյանինը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, իսկ Գագիկ Վանոյանինը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

5. Ընդունել ի գիտություն, որ Արսեն Թորոսյանի գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են Ազգային ժողովի միջոցների հաշվին:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ վարչապետի կողմից ստորագրված որոշման մեջ առկա չէ Աննա Հակոբյանի անունը, ըստ այդմ, նաեւ Վաշինգտոն մեկնման ծախսերում ներառված չէ վարչապետի տիկնոջ մեկնման գումարը:

Հարկ է նշել, որ պատվիրակության անդամները ավելի վաղ են մեկնել ԱՄՆ, քան Նիկոլ Փաշինյանը: Օրինակ՝ ՀՀ վարչապետի մամուլի քարտուղարը, ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետը, ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության 2 օպերատորները եւ լուսանկարիչը ԱՄՆ էին մեկնել 1-2 օր առաջ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՄԵՆՔ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԻ ՄԱՍՆ ԵՆՔ». Գ. ԾԱՌՈՒԿՅԱՆ

Գագիկ Ծառուկյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Սիրելի՛ հայրենակիցներ

Այս տարի լրանում է Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 80-ամյակը: Հայ ժողովուրդն իր նշանակալից մասնակցությունն է ունեցել այդ հաղթանակին: Հայաստանը եւ Արցախը տվել են փառապանծ զինվորականներ, հերոսներ, գեներալներ, մարշալներ: Մեր ներդրումն իսկապես նշանակալի է:

Սա մարդկության պատմության ամենավճռորոշ փուլերից էր, երբ քաղաքակիրթ աշխարհը կասեցրեց ֆաշիզմի հրեշավոր արշավը:

Սա մեր ժողովրդի համար թանկ ու զգացմունքային թեմա է: Մեր հայրերը, մեր պապերը, մեր մայրերը ներդրել են իրենց կյանքը, առողջությունը եւ մասնագիտական կարողությունները՝ ընդհանուր հաղթանակի գործում:

Այս հաղթանակը Հայոց պատմության մի մասն է, եւ այդ էջը պիտի հարգանքով ու խնամքով պահպանվի ոչ միայն գրքերում, այլեւ մեր մտքերում ու մեր սրտերում:

Մենք իրավունք չունենք մոռանալու պատմությունը, մենք իրավունք չունենք թույլ տալու, որ այն խեղաթյուրվի:

Մենք պետք է հավուր պատշաճի հիշենք մեր հերոսներին, մեր ավագ սերնդի մասնակցությունը մեծ հաղթանակին, եւ նոր սերունդների համար կարեւորենք նրանց անմահ գործը:

Մեզ այսօր դրսից մեղադրում են ֆաշիստական նկրտումների մեջ, երբ մենք մեր անմնացորդ մասնակցությունն ենք ունեցել իսկական ֆաշիզմի ջախջախման գործում: Մեզ այսօր փորձում են բաժանել արեւմտամետների եւ ռուսամետների՝ թուլացնելու համար մեր կամքը:

Երկրորդ համաշխարհայինում մենք՝ հայերս, եղբայրական ռուս ժողովրդի կողքին, խորհրդային պետության մաս կազմող մյուս ժողովուրդների հետ ուս ուսի պայքարել ենք իրական ֆաշիզմի դեմ՝ մեր արյամբ պահելով մեր հայրենիքի ամեն մետրը եւ մեր արժանապատվությունը: Մենք՝ հայերս, մեր անջնջելի մասնակցությունն ենք ունեցել նաեւ Ֆրանսիական դիմադրության կազմակերպման գործում՝ ընդդեմ նույն ֆաշիզմի:

Հայրենական մեծ պատերազմի 80-ամյակը կարեւորագույն տարեդարձ է բոլոր քաղաքակիրթ եւ խաղաղասեր ժողովուրդների համար:

Ես հանձնարարել եմ «Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի աշխատակազմին՝ սկսել լայնածավալ ծրագիր եւ աջակցել այլ անհատների եւ կազմակերպությունների նմանատիպ ծրագրերին, որոնք ուղղված կլինեն հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի կարեւորմանը, հերոսների մեծարմանը, միասնական անցյալի գնահատմանը, այդ հաղթանակի պատմական եւ քաղաքակրթական կարեւորության ներկայացմանը:

Մենք մեծ ու շատ թանկ հաղթանակի մի մասն ենք եւ դրանով պետք է հպարտանալ»:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անթիլիասի Մայրավանքում փետրվարի 1-ին ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ Հովսեփ Տեր Գեւորգյանը, ՀՅԴ Լիբանանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հակոբ Բագրատունին եւ կազմակերպական ներկայացուցիչ Ալպեր Պալապանյանը հանդիպել են Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետնին:

Հանդիպմանն արծարծված հիմնական թեմաներն են եղել Հայաստանի ներկա իրավիճակը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների այսօրվա համապատկերը, հայոց ցեղասպանության հարցի մասին հնչող հայտարարությունների բացասական հետեւանքները, Միջին Արեւելքում տեղի ունեցող փոփոխությունները եւ հատկապես լիբանանահայ համայնքի դիմագրաված մարտահրավերները:

ՄԻՊ-Ը՝ ՂԱՐԻԲ ԲԱԲԱՅԱՆԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՏԱՀՈԳԻՉ Է ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Ղարիբ Բաբայանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տեղեկությունների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմում սկսվել է ֆնարկման ընթացակարգ, որի շրջանակում պարզաբանումներ կպահանջվեն իրավասու մարմիններից:

«Նկատի ունենալով Մարդու իրավունքների պաշտպանի համար օրենքով նախատեսված սահմանափակումները եւ արդարադատություն իրականացնող մարմինների գործունեությանը միջամտելուց ձեռնպահ մնալու օրենսդրական պահանջը, որեւէ կերպ քննարկման առարկա չդարձնելով դեպքին առնչվող տարբեր հանգամանքների քննության անհրաժեշտության հարցը, որն այս փուլում այլ մարմինների իրավասության շրջանակում է, Մարդու իրավունքների պաշտպանը հարցը խիստ կարեւորում է ատելության հրահրման եւ բռնության կոչերի քննության քրեադատավարական պրակտիկայի՝ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից:

Ատելության հրահրման եւ բռնության կոչերի դեպքերի քննության միջազգային չափանիշներին, Հայաստանում ատելության հրահրման եւ բռնության կոչերի քննության պրակտիկային ու առկա խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է դեռեւս 2023 թվականին հրապարակված իր՝ «Ատելության հրահրման եւ բռնության կոչերի դեպքերի քննությունը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգում» վերտառությամբ ուսումնասիրության շրջանակներում՝ անդրադառնալով ինչպես խնդրին վերաբերելի միջազգային չափանիշներին, այնպես էլ Հայաստանում առկա պրակտիկայի խնդիրներին:

Ատելության խոսքի քննությանը վերաբերելի միջազգային իրավական չափանիշներով մանրամասն ամրագրվում են այն բոլոր հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել ատելության հրահրման պարագայում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումների իրավաչափությունը գնահատելիս:

Ըստ այդմ՝ հանրային շահին առնչվող, հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ արված հայտարարությունների, հրապարակումների, տարածված նյութերի, քաղաքական բանավեճի, քաղաքական բնույթի քննադատության եւ երկխոսության պարագայում խոսքի իրավաչափ սահմանափակման շրջանակը բավականին նեղ է, եւ այդ սահմանափակումը, հատկապես եթե այն իրականացվում է քրեաիրավական կառուցակարգերով, պետք է ունենա ակնհայտ ծանրակշիռ պատճառներ:

Ավելին, քաղաքական գործիչներին եւ պետական իշխանությանն ուղղված քննադատության թույլատրելի շրջանակը ավելի լայն է, քան մասնավոր անձանց պարագայում, եւ պետությունը պետք է զգուշավորություն ցուցաբերի նրանց պաշտպանության նպատակով քրեաիրավական միջոցների դիմելու հարցում, հատկապես երբ առկա են այլ միջոցներ, որոնցով հնարավոր է արձագանքել անարդարացի քննադատությանը:

Միջազգային չափանիշների համաձայն՝ ատելության կամ բռնության հրահրման փաստի առկայության վերաբերյալ դատողություններ անելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, ինչպես, օրինակ՝ այն հանգամանքը, թե ում է ուղղված խոսքը, որքանով է այդ խոսքի հասցեատերը կամ թիրախավորված խումբը խոցելի տվյալ հասարակությունում: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր որոշումներից մեկով անդրադառնալով ոստիկանությանն ուղղված անվայելուչ, նսեմացնող եւ անհարգալից եզրութաբանությամբ քննադատությանը, կարեւորելով ոստիկանների պաշտպանության համակարգի անհրաժեշտությունը, միեւնույն ժամանակ, ընդգծել է, որ վիրավորանքների, ծաղրի կամ զրպարտության միջոցով կատարվող հարձակումներից քրեաիրավական կառուցակարգերով պաշտպանության համատեքստում ոստիկանությունը, որպես իրավապահ մարմին, չի կարող դիտարկվել որպես չպաշտպանված փոքրամասնություն կամ ճնշումների եւ անհավասարության պատմություն ունեցող խումբ, կամ նախապաշարմունքների, թշնամանքի եւ խտրականության ենթարկվող խումբ կամ որեւէ այլ պատճառով խոցելի խումբ:

Ելնելով անձի կատարած հրապարակման եւ իրավասու մարմնի հաղորդագրության վերլուծությունից, նկատի ունենալով վերը շարադրված չափանիշները՝ Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու հանգամանքը: Այդ հանգամանքը կարող է լուրջ բացասական հետեւանքներ ունենալ նաեւ ատելության հրահրման գործերի քննության պրակտիկան միջազգային չափանիշներին չհամապատասխանող եղանակով զարգացնելու եւ այս հիմքով խոսքի ազատության հայեցողական սահմանափակման դիտանկյունից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻՆ ՉՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանին շարունակում է մտահոգել ազատությունից զրկված անձանց՝ քրեակատարողական հիմնարկից դատական նիստերին չտեղափոխելու արատավոր պրակտիկան:

Ինչպես տեղեկանում ենք ՄԻՊ-ի տարածած հաղորդագրությունից, այս հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար ստանում է բողոքներ ինչպես ազատությունից զրկման վայրեր կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում, այնպես էլ՝ անհատական բողոքներով:

Բարձրացված խնդիրների գերակշիռ մասը վերաբերում է Ներքին գործերի նախարարության ոստիկանության ուղեկցող գումարտակի կողմից իրականացվող ազատությունից զրկված անձանց դատարաններ տեղափոխման աշխատաքների կազմակերպմանը: Թեեւ ՆԳՆ-ից Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ նշել են, որ 2024 թվականի 2-րդ կիսամյակում ձեռք է բերվել 22 նոր տրանսպորտային միջոց, միեւնույն է հարցը շարունակում է մնալ չլուծված:

«Օրինակ, Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով անձը 1 տարվա ընթացքում իրեն վերաբերելի 7 դատական նիստից 4-ին չի կարողացել մասնակցել, մեկ այլ բողոքի համաձայն՝ անձը շուրջ 2 տարի վերը նշված խնդիրների պատճառով չի կարողացել ընդհանրապես մասնակցել դատական նիստին: Վերոնշյալ խնդրի վերաբերյալ իրավասու մարմիններից պահանջվել են պարզաբանումներ, որոնց համաձայն՝ դատական նիստերի չտեղափոխելու պատճառներ են նշվել. ուղեկցող գումարտակի թափուր հաստիքների հետեւանքով առաջացած աշխատանքային գերծանրաբեռնվածությունը, տրանսպորտային միջոցների անբավարարությունը կամ անսարքությունը:

Արդյունքում, դատական նիստերին մասնակցությունը չապահովելու պարագայում, վտանգվում է անձանց արդար դատաքննության իրավունքը»,- նշված է հաղորդագրության մեջ:

Մարդու իրավունքների պաշտպանը եւս մեկ անգամ շեշտում է, որ պետության կողմից պետք է ձեռնարկվեն գործուն քայլեր քրեակատարողական հիմնարկներից ազատությունից զրկված անձանց տրանսպորտային միջոցներով դատարաններ ուղեկցումն ապահովելու ուղղությամբ, ինչը գործնականում կարող է բարձրացնել նաեւ դատական իշխանության գործունեության արդյունավետությունը:

«Խիստ մտահոգիչ է, որ տարիներ շարունակ բարձրացրած խնդիրները մնում են անփոփոխ եւ արդիական՝ այդ թվում՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ տրանսպորտային միջոցների համար հստակ չափանիշներ սահմանված չլինելու հարցը»,- եզրափակվում է ՄԻՊ-ի տարածած հաղորդագրությունը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ ԵՎ ԹՄՐԱՆՅՈՒԹ

Հունվարի 30-ին Երեւանի քրեական ոստիկանները ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս ապօրինի զենք-զինամթերք եւ թմրամիջոց պահելու ու օգտագործելու կասկածանքով Իսահակյան փողոցում ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 45-ամյա մի տղամարդու:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է վեց փամփուշտով լիցքավորված մարտականի ձեւափոխված թմբուկավոր ատրճանակ, երկու փամփուշտ, գաղտնի փականով ծալովի դանակ եւ դեղնականաչավուն զանգված: Նա հայտնել է, թե զանգվածը մարիխուանա տեսակի թմրամիջոց է: 45-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի քննչական բաժին:

ԴԵՐԱՍԱՆԻ ՄԵՔԵՆԱՅԻՑ «ԿՐԻՍՏԱԼ» ՏԵՍԱԿԻ ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հայտնի երգիչ-դերասան Հայկ Դուրգարյանի մեքենայից «Կրիստալ» տեսակի թմրամիջոց են հայտնաբերել:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի՝ երգիչը խոստովանել է, որ գտնվածն իրեն է պատկանում, այն ձեռք է բերել տելեգրամյան ալիքներից մեկի միջոցով ու իր օգտագործման նպատակով է պահել մեքենայում:

Ավելի վաղ SHAMSHYAN.com-ը հայտնել էր, որ հունվարի 31-ին ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի պարեկները «Վահագնի» թաղամասի դիմաց ստուգման նպատակով կանգնեցրել են Infinity մակնիշի ավտոմեքենան:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, տեղում ավտոմեքենայի վարորդը սրահի թեւատակի արկղի միջից ներկայացրել է «Արկոլադ, մուգ շոկոլադ» գրառմամբ մետաղական տուփ, ինչից հետո պարեկներին հայտնել է, որ այն պատկանում է իրեն, որի մեջ պարեկները հայտնաբերել են «կրիստալ» տեսակի թմրանյութ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 31-ից փետրվարի 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 204 դեպք, որից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՖԻՆՆԱԽԻՑ 2,5 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Իջեւանի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիայի բաժանմունքի նախկին վարիչ վարիչ Էդվարդ Ֆրանգուլյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացիական հայց է ներկայացրել՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ արդարացվածի վնասի հատուցման պահանջով: Հայցով Էդվարդ Ֆրանգուլյանը դատարանին խնդրում է հօգուտ իրեն բռնագանձել 2,5 միլիոն դրամ. պահանջվող նյութական վնասի չափը կազմում է մեկ միլիոն ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական կամ բարոյական վնասի չափը կազմում է մեկ միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ: 2024թ. հոկտեմբերի 24-ին Դիլիջանում կայացած դատական նիստում դատավոր Ա. Պապիկյանը որոշել է քաղաքացիական գործը ըստ ընդդատության ուղարկելու մասին պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել, քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը: Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում այս գործով նախնական դատական նիստեր են կայանում: Է. Ֆրանգուլյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա, լինելով «Իջեւան բժշկական կենտրոն» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիայի բաժանմունքի վարիչ, 2017թ. հուլիսի 14-ին կամ 15-ին, նախնական համաձայնության գալով բաժանմունքի մանկաբարձ-գինեկոլոգ Վանուհի Ասիլբեկյանի հետ, նրա կողմից կատարված արարքը թաքցնելու եւ պատասխանատվության չենթարկելու նպատակով՝ պատասխանատվությունից ազատող, պաշտոնական այլ փաստաթուղթ հանդիսացող, Էլինա Սաղոյանի անվամբ լրացված թիվ 1554 ծննդաբերության պատմության մեջ կեղծ գրառումներ է կատարել: 2023թ. հուլիսի 2-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Ջաքինյանը վճռել է առաջադրված մեղադրանքով արդարացնել Է. Ֆրանգուլյանին եւ Վ. Ասիլբեկյանին: Տավուշի մարզի դատախազությունը այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, սակայն վերաքննիչ դատարանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռն անփոփոխ է թողել:

ՀՐԴԵՀՆԵՐԸ ԴԻՏԱՎՈՐՅԱ՞Լ ԵՆ

Դիլիջանի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթի թղթակցին բողոքել են, որ վերջերս Դիլիջանի ազգային պարկում բռնկված հրդեհները, որոնք ընդգրկել են մոտ 25 հա տարածք, դիտավորության պատճառ ունեն: Դիլիջանցիներն ասում են, որ հրդեհները արվել են ազգային պարկում արված մեծածավալ հատումների, կտրված հաստաբուն ծառերի հետքերը թաքցնելու նպատակով: Նրանք ասում են, որ ապօրինություններ թույլ տված պաշտոնյաների թիկունքն իշխանությունն է: Դիլիջանցիների խոսքերով՝ Դիլիջանի ազգային պարկում ծառայություն իրականացնող էկոլոգիական պարեկները ձախողել են իրենց վստահված գործը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ՄԵՐ ԾՆՈՒՆԴՆ Է

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԸ ԴԱՐՁԱՎ 14 ՏԱՐԵԿԱՆ

Մեր կարգախոսն է՝ «Օրաթերթ բոլորի եւ ամեն ինչի մասին՝ առանց տաբուների»:

14 տարի առաջ Թագուհի Թովմասյանի գլխավորությամբ մի խումբ երիտասարդներ հիմնադրեցին «Ժողովուրդ» օրաթերթը. այդ ժամանակ միտումը դեպի թվայնացումն էր եւ համացանցային մեդիան: Ավանդական մամուլն իր դիրքերը ակնհայտորեն զիջում էր, բայց մենք, հակառակ հոսանքին, նոր օրաթերթ հիմնադրեցինք՝ համոզմունքով, որ այն դառնալու է Հայաստանի թոփ լրատվամիջոցներից մեկը:

Եվ այսպես, 2011 թվականի փետրվարի 1-ին լույս տեսավ մեր օրաթերթի առաջին համարը 5000 տպաքանակով՝ սպասվածից մեծ պահանջարկ ձեւավորելով: 3 օր անվճար բաժանում էինք թերթերը ընթերցողներին՝ մեր ճանաչելիության համար, բայց քանի որ պահանջարկը բավականին մեծ էր, անվճար գրառումով թերթը շատ կրպակներ վաճառում էին:

Նոր մեդիա դարաշրջանում թերթը մնում է անկախ եւ ազդեցիկ:

Մեծ դժվարությունների միջով ենք անցել. դատական տասնյակ հայցեր, ազատ խոսքը լռեցնելու փորձեր, մեզ սնանկացնելուն ուղղված գործողություններ, հոդված գրելու համար բերման ենթարկելու փորձեր, զանգվածային պայքար՝ հանուն մեր եւ ձեր իրավունքների...

Գաղտնալսվեց անգամ գլխավոր խմբագիրը, անհայտ անձինք ներխուժեցին մեր խմբագրություն, եւ գործը մինչ օրս բացահայտված չէ:

Ազգային ժողովի նախագահից սկսած մինչեւ Երեւանի քաղաքապետ, իշխանահաճո գործարարներ դատական հայցեր են ներկայացրել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ՝ խոշոր տուգանքների պահանջներով... Սա էլ կհաղթահարենք: Պայքարից հոգնողը չենք:

14 տարի, որոնք չփոխեցին մեզ... Անկողմնակալությունը, անաչառությունը, օբյեկտիվությունը եւ որեւէ քաղաքական ուժին չծառայելը մեզ համար գլխավոր արժեքներ են: Մեր ամենահուսալի գործընկերը մեր ընթերցողներն են, որոնք տարիների ընթացքում հասել են հարյուր հազարների՝ տպագիր եւ էլեկտրոնային տարբերակներով: Մեր օրաթերթը հուսալի եւ ազնիվ աղբյուր է ինֆորմացիա ստանալու համար, վստահելի գործընկեր՝ գովազդատուների համար:

Փոքրիկ վիճակագրություն

14 տարիների ընթացքում «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել է 3047 համար, որտեղ լույս են տեսել մոտ 27 հազար 423 հոդվածներ՝ այդ թվում եւ հետաքննական ժանրի, 6094 հարցազրույցներ՝ տարբեր գործիչների հետ եւ 70 հազար 81 լուր՝ ներառելով տարբեր բնագավառներ:

Facebook սոցիալական ցանցում մենք ունենք 500.000 հետեւորդ, Youtube-ում՝ 300.000 հետեւորդ, իսկ մեր կայք՝ ArmLur.am այցելությունների թիվը ամսական 1.5-2 մլն է կազմում:

14 տարիների ընթացքում մեր դեմ ներկայացվել են մոտ 25 դատական հայցեր, որից 23-ի դեպքում հաղթել ենք եւ շարունակում ենք բողոքարկել:

Այսպիսով՝ շարունակելու ենք անցյալի ոգով դեպի ապագա, բայց մե՛ր իմացած ու պատկերացրած ապագան:

Շնորհակալություն մեզ հետեւելու համար:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԲԱՑԱՌԵ՛Ք ՇԱՔԱՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԸ. ՀՀ ԱՆ

Nature Medicine գիտական ամսագրում հրապարակվել են գլոբալ հետազոտության արդյունքները, որն ընդգրկել է 184 երկիր՝ տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում, 1990-2020թթ. ժամանակահատվածը: Այս մասին հայտնում են ՀՀ առողջապահության նախարարությունից:

Հետազոտողներն ուսումնասիրել եւ գնահատել են այդ տարիներին շաքար պարունակող ըմպելիքների սպառման հետեւանքով ազդեցությունը 2-րդ տիպի շաքարային դիաբետի (ՇԴ) եւ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների (ՍԱՀ) վրա:

2020 թվականի տվյալներով՝ շաքար պարունակող ըմպելիքների օգտագործումն ամբողջ աշխարհում նպաստել է 2-րդ տիպի ՇԴ 2.2 միլիոն եւ ՍԱՀ 1.2 միլիոն նոր դեպքերի առաջացմանը, ինչը կազմում է դեպքերի 9,8% եւ 3,1%-ը: Տվյալները դիտարկվել են ըստ ժողովրդագրական խմբերի, որոնց համաձայն՝ շաքար պարունակող ըմպելիքների օգտագործման բեռն ավելի բարձր է տղամարդկանց, երիտասարդների, բարձրագույն կրթությամբ անձանց եւ քաղաքային բնակչության շրջանում:

ՋԵՐՄՈՒԿԻ ՃՈՊԱՆՈՒՂԻՆ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է

Ջերմուկում պաշտոնապես բացվել են Համահայկական ձմեռային 2-րդ խաղերը:

Այս առիթով երկարատեւ դադարից հետո վերագործարկվել է նաեւ քաղաքի ճոպանուղին:

Տեղեկությունը հայտնել են «Վիզիթ Ջերմուկ զբոսաշրջային տեղեկատվական հարթակ» Ջերմուկի զբոսաշրջության զարգացման կենտրոնից:

Ճոպանուղու 1 տոմսն արժե 1500 դրամ, երկարությունը 1 կմ է:

Ճոպանուղու վերանորոգման համար ՀՀ կառավարությունը սկզբում՝ որպես տեխնիկական վնասի փոխհատուցում, հատկացրել է 12 մլն դրամ, ապա 24 մլն դրամ էլ՝ ճոպանի ձեռքբերման համար:

Ջերմուկի ճոպանուղու աշխատանքը նախ դադարեցվել էր 2022 թ.-ի սեպտեմբերին՝ ադրբեջանական հարձակումից հետո, ապա դեկտեմբերին գործարկվել, որից ամիսներ անց՝ 2023 թ.-ի մարտի 8-ից, դարձյալ փակվել էր, քանի որ տեխնիկական ստուգումից հետո պարզվել էր, որ գլխավոր ճոպանը վնասված է:

Ջերմուկում ընթանում են Համահայկական ձմեռային 2-րդ խաղերը: Դրանք կտեւեն մինչեւ փետրվարի 7-ը:

ՓԱԹԵԹՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի քաղաքապետարանը տեղեկացնում է, որ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ փետրվարի 28-ը ներառյալ ձեռք բերած 30-օրյա, 90-օրյա եւ 365-օրյա տոմսային փաթեթները կստանան լրացուցիչ 30 օր օգտագործման հնարավորություն:

Նախաձեռնությունը գործում է ինչպես հիմնական, այնպես էլ արտոնյալ սակագնով գեղչված տոմսերի համար:

Ինչպե՞ս ձեռք բերել տոմսային փաթեթները

transport.yerevan.am կայքից
Telcell բջջային հավելվածից
TelCell տերմինալներից՝ ակտիվացնելով դրանք տրանսպորտային քարտում

Որտեղի՞ց ձեռք բերել տրանսպորտային քարտերը

Մետրոյի բոլոր կայարաններից
Վարչական շրջանների մասնաշենքերից (թաղապետարաններից)
TelCell-ի գրասենյակներից
Հանրապետության եւ Ազատության հրապարակների ինֆոկետերից:
Մանրամասների համար պետք է այցելել transport.yerevan.am կայք:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 28 պատահար. 48 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Fast Shift–Ը ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ICE Barcelona 2025–ԻՆ

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունը հունվարի 19-22-ին մասնակցել է ICE Barcelona 2025 տեխնոլոգիական ցուցահանդեսին: Fast Shift-ն արդեն չորրորդ անգամն է մասնակցում ցուցահանդեսին՝ներկայացնելով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ նորարար լուծումներ:

Fast Shift ընկերության խորհրդի նախագահ Ռոման Բադալյանը նշել է. «Այս անգամ Fast Shift-ը ներկայացնում է բլոկչեյն տեխնոլոգիայով հայկական առաջին էլեկտրոնային դրամապանակը: Այցելուների հետաքրքրությունը մեծ է, ինչը ենթադրում է, որ մեր ընկերությանը հաջողվել է ստեղծել իսկապես պահանջված արտադրանք: Այս հարթակը մեծ հնարավորություններ է ստեղծում թե՛ մեր, թե՛ մեր օտարազգի գործընկերների համար ճանաչելու միմյանց եւ միմյանց աշխատանքը, ինչը համագործակցության նոր հորիզոններ է խոստանում»:

Հավելենք, որ միջազգային լավագույն փորձի կիրառմամբ թողարկված Fast Shift դրամապանակն օգտատերերին հնարավորություն է տալիս էլեկտրոնային փողը՝ AMDC-ն, շրջանառել որպես թվային ակտիվ՝ ավելի արագ եւ ապահով վճարումներ կատարելու նպատակով:

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունը վերաթողարկել է արագ, անվտանգ, ժամանակակից դիզայնով հավելված, որը ֆինտեխ նոր լուծումների հիման վրա մատուցում է 400-ից ավելի ծառայություններ:

Fast Shift վճարահաշվարկային ծառայության հավելվածը ներբեռնելու համար կարող եք անցնել հետեւյալ հղումով:

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 2024–ԻՆ ԱՃԵԼ Է

2024 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 8 տոկոսով: Այս մասին «Ֆեյսբուք»-ի էջում հայտնել է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Տնտեսական աճի հիմնական շարժիչները եղել են հետեւյալ ոլորտները. արդյունաբերություն՝ 4.7 տոկոս, գյուղատնտեսություն՝ 1.6 տոկոս, շինարարություն՝ 14.5 տոկոս, առեւտուր՝ 17.0 տոկոս, ծառայություններ՝ 10.6 տոկոս:

IDBank

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ ԿՍՊԱՍԱՐԿՎԵՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

IDBank-ն այսուհետեւ իր հաճախորդներին կընդունի նաեւ Արմավիր քաղաքում՝ Բանկի նորաբաց մասնաճյուղում:



Առցանց համակարգերի զարգացմանը զուգահեռ՝ IDBank-ը կարեւորում է նաեւ հաճախորդների կյանքում ֆիզիկական ներկայությունը, նույնը գնահատում են նաեւ հաճախորդները:

«Մենք գիտենք, որ մեր շատ հաճախորդներ սիրում են սպասարկվել հենց մասնաճյուղերում, դրա համար փորձում ենք Հայաստանի ավելի շատ քաղաքներում ապահովել մեր ներկայությունը: Նոր մասնաճյուղի հասցեն էլ ընտրել ենք՝հաշվի առնելով Արմավիր քաղաքի մեր հաճախորդների բազմաթիվ հարցումները՝ այստեղ մասնաճյուղ ունենալու վերաբերյալ: Վստահ եմ՝ այստեղ նույնպես մեր թիմը որակյալ ու բարձրորակ ծառայություններ կմատուցի հաճախորդներին», - ասաց IDBank-ի վարչության նախագահ Միհեր Աբրահամյանը:

Վաճառքների կազմակերպման եւ տարածքային կառավարման վարչության ղեկավար Արթուր Քոչարյանն ասում է, որ Արմավիր մասնաճյուղը հագեցած է հարմարավետ սպասարկման համար անհրաժեշտ բոլոր հնարավորություններով. «Մեր պրոֆեսիոնալ թիմը պատրաստ է օգնել հաճախորդներին՝ կատարելու իրենց բոլոր գործարքները տեղում, բացի դա, մասնաճյուղում առկա է IDBanking 24/7 սպասարկման գոտի՝ հնարավոր դարձնելով անկանխիկ գործարքները արագ եւ մի քանի հպումով», - ասաց Արթուր Քոչարյանը:

IDBank-ի Արմավիր մասնաճյուղը գործելու է Հանրապետության փ. 14/5 հասցեում: Այս պահին IDBank-ն ունի արդեն 17 մասնաճյուղ՝ Երեւանում, Էջմիածնում, Վանաձորում, Գյումրիում, Աբովյանում, Հրազդանում եւ Արմավիրում:

IDBank-ից հիշեցնում են, որ բանկային բոլոր գործարքները կարելի է կատարել նաեւ առցանց՝ IDBanking.am առցանց հարթակով կամ Idram&IDBank հավելվածով. վերջինս ունի անհպում QR-վճարումներ ընդունող վաճառակետերի ամենամեծ ցանցը Հայաստանում՝ շուրջ 23.000 վաճառակետ, որոնցից 10.000-ում առկա է նաեւ Rocket Line 0% թվային ապառիկով վճարման հնարավորությունը:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է
ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ԼՈՒՐԵՐ

Barerar.am ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՀԱՅՏ ՄԱՐԴԻԿ

Հարություն Մովսիսյան, Իվետա Մուկուչյան, Սոնա Ռուբենյան, Գարիկ Պապոյան, Լուիզա Ղամբարյան, Միքայել Պողոսյան. այս եւ տասնյակ այլ հայտնի արտիստների մեկ գաղափարի շուրջ է համախմբել Barerar.am հարթակը:

Նրանց միավորել է մեր կողքին ապրող կարիքավոր անձանց օգնելու ցանկությունը, որոնց վերջիններս ծանոթանում են Barerar.am կայքում եւ հավելվածում ներկայացվող պատմությունների միջոցով:

Նրանք այս ամիսների ընթացքում կամավոր կանգնեցին տվյալ ընտանիքների կողքին եւ իրենց օրինակով ոգեշնչեցին մարդկանց դառնալ էլ ավելի ուշադիր, բարի եւ կարեկից իրենց կողքին ապրող սոցիալապես անապահով ընտանիքների հանդեպ:

Բացի հայտնի եւ սիրված անձանցից, հարթակը շատ կարճ ժամանակահատվածում լայն տարածում է գտել եւ վստահություն է ձեռք բերել նաեւ քաղաքացիների կողմից: Barerar.am-ի գաղափարի շուրջ համախմբվել են հազարավոր կարեկից մարդիկ՝ օգնության ձեռք մեկնելով այս կամ այն ընտանիքին:

Ի դեպ, Barerar.am կայքը եւ հավելվածը չեն հետապնդում որեւէ ֆինանսական շահ եւ չեն գանձում միջնորդավճար:

Բարերար դառնալու հերթը ձերն է:



ՎՃԱՐԻ՛Ր IDBank–Ի Mastercard–ՈՎ ԵՎ ՍՏԱՑԻ՛Ր 5% idcoin

Միջազգային վճարումները կրկին բոնուսաշատ են լինելու, քանի որ փետրվարի 1-ից բոլոր միջազգային գործարքների համար վճարելով IDBank-ի Mastercard-ով՝ կստանաք 5% idcoin:

Այս առաջարկը բացառիկ է եւ հատկապես կուրախացնի առցանց գնումների սիրահարներին: Միջազգային բոլոր խանութներից պատվերների համար պարզապես պետք է վճարել IDBank-ի Mastercard-ով եւ ստանալ 5% idcoin:

IDBank-ի էկոհամակարգի զարգացման եւ գործընկերների հետ համագործակցության գծով մենեջեր Գոհար Ղուկասյանի խոսքով՝ քարտապանները միշտ մեծ ուրախությամբ են ընդունում նմանատիպ արշավները. «Մեր գործընկերների հետ միշտ բաց ենք նոր առաջարկների ու արշավների՝ մեր հաճախորդների գնումները ոչ միայն հարմարավետ, այլեւ շահավետ դարձնելու համար: Վստահ եւ ուրախությամբ կարող եմ ասել, որ այս տարի նույնպես հետաքրքիր անակնկալներ շատ են լինելու», - ասաց Գոհար Ղուկասյանը:

Մեկ ամսվա ընթացքում հնարավոր է ստանալ առավելագույնը 10.000 ՀՀ դրամ (նախքան հարկումը): idcoin-ի ստացման համար մեկ վճարային գործարքի գումարը պետք է կազմի կամ գերազանցի 5 000 ՀՀ դրամը: Իսկ եթե դեռ չունեք IDBank-ի Mastercard, հիմա այն ձեռք բերելու ճիշտ պահն է. արշավի ընթացքում հավելվածի միջոցով պատվիրված Mastercard տեսակի քարտերի համար գործելու է զեղչված սակագին՝ Mastercard Standard-ը կարող եք ձեռք բերել առանց սպասարկման վճարի առաջին տարվա համար, իսկ Mastercard Gold-ը՝ 70% զեղչված՝ վճարելով 2400 ՀՀ դրամ առաջին տարվա սպասարկման համար: Արշավը գործելու է մինչեւ սույն թվականի ապրիլի 30-ը: Մանրամասներին կարող եք ծանոթանալ «ԱյԴի» բանկի կայքում:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է
ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ՝ ԱՄԵՆԱՎՏԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Տավուշի մարզում գտնվող Առաքելոց վանական համալիրը եւ բնակատեղին ընդգրկվել են Եվրոպայի 14 ամենավտանգված ժառանգության վայրերի կարճ ցանկում: Այս մասին հայտնում է «Եվրոպա Նոստրա»-ն եւ Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ինստիտուտը:



2013-ից իրականացվող ծրագիրն ուղղված է Եվրոպայի մշակութային ժառանգության պաշտպանությանը, այդ թվում՝ պետական ու մասնավոր աջակցության ապահովմանը, ինչպես նաեւ վտանգված վայրերի փրկությանն ուղղված գործողությունների խթանմանը:

Եվրոպայի 14 վտանգված վայրերը ընտրվել են միջազգային խորհրդակցական խմբի կողմից, որի կազմում ընդգրկված են հնագիտության, ճարտարապետության, ժառանգության պահպանման, նախագծային վերլուծության եւ ֆինանսավորման ոլորտի մասնագետներ: Ընտրությունը կատարվել է հետեւյալ չափանիշներով. վայրի մշակութային եւ պատմական արժեքի կարեւորությունը, վտանգի իրական եւ հրատապ լինելը, տեղական համայնքների ներգրավվածության մակարդակը, պետական եւ մասնավոր հատվածի աջակցությունը, տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը:

Թաքնված Տավուշի անտառներում՝ Աճարկուտ գյուղից երկու կիլոմետր դեպի արեւմուտք, Կիրանց գետի երկայնքով, Առաքելոց վանական համալիրը միջնադարյան կրոնական եւ աշխարհիկ ժառանգության բացառիկ գոհարներից է: 13-րդ դարում այն եղել է մշակութային ու տնտեսական կարեւոր կենտրոն՝ Հայկական մետաքսի ճանապարհի առեւտրային աշխուժության վկայությամբ: Մեկուսի դիրքը եւ հայ-ադրբեջանական սահմանին հարեւանությունը ընդգծում են համալիրի ոչ միայն պատմական, այլեւ աշխարհաքաղաքական նշանակությունը:

Համալիրը շրջապատված է տպավորիչ պարսպով ու աշտարակներով, իսկ նրա ճարտարապետական կենտրոնը գլխավոր եկեղեցին է՝ գմբեթավոր դահլիճով ու կից գավթով, որը զարդարված է հայկական ավանդական «հազարաշեն» տանիքով: Այսօր այստեղ պահպանվել են Սուրբ Սարգսի եզակի որմնանկարը, քարավանատունը, ձիթհանքը եւ Սրանոց կամուրջը, որոնք վկայում են երբեմնի աշխույժ առեւտրային կյանքի մասին: Ջաքարյանների ու մոնղոլական տիրապետության տարիներին վանական համալիրը վայելել է հարկային արտոնություններ՝ դառնալով կրոնական ու աշխարհիկ կյանքի համակեցության վառ օրինակ եւ հայ-վրացական մշակութային փոխազդեցության կարեւոր օղակ: Սակայն 17-րդ դարից բնակատեղին լքվել է եւ մինչ օրս պատշաճ ուսումնասիրված չէ:

Այսօր Առաքելոցը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Քայքայվող պատերը, վայրի բուսականության ներխուժումը, կլիմայական փոփոխությունները, առատ տեղումները եւ սելավները սպառնալիք են համալիրի պահպանության համար: Սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելն ու երկրաշարժերից վնասված կառույցները լրացուցիչ վտանգներ են ստեղծում: Մարդկային գործոնն էլ ակնհայտ է՝ գրաֆիտիով պատված պատեր, չպահպանվող տարածքներ ու ոչ կանոնակարգված հանգստի գոտիներ: Բացի այդ, համալիրում առկա չղջիկների գաղութը պահանջում է մշակութային ժառանգության եւ վայրի բնության պահպանության միջեւ հավասարակշռված մոտեցում:

Այս հանգամանքներում Առաքելոց վանական համալիրը եւ բնակատեղին ընդգրկվել են «Յոթ ամենավտանգված» ժառանգության վայրերի ծրագրում: Դրա առաջադրումը նախաձեռնել է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արեւելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժնի դոկտոր Յասմին Դում-Թրագուտը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, Աճարկուտի համայնքապետարանի, «Կապույտ վահան Հայաստանը» կազմակերպության եւ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի աջակցությամբ: Տարածքի հետազոտության, պահպանության եւ կայուն զարգացման ուղղությամբ խորհրդատվական աջակցություն կտրամադրի Ավստրիայի Կրեմսի շարունակական կրթության համալսարանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է վանական համալիրի եւ բնակատեղիի մանրակրկիտ ուսումնասիրություն, տարածքի բարեկարգում, պահպանություն եւ կայուն էկոտուրիզմի խթանում՝ տեղական շահառուների, ակադեմիական հաստատությունների ու հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ: Կրթական ծրագրերն ու զբոսաշրջային արահետների բարեկարգումը նպատակ ունեն խթանելու տեղի բնակչության կապը այս միջնադարյան ժառանգության հետ՝ ձեւավորելով հպարտության ու գնահատանքի զգացում տարածաշրջանի մշակութային ինքնության նկատմամբ:

«Յոթ ամենավտանգված» ծրագրի միջազգային խորհրդակցական խումբը շեշտում է, որ Առաքելոցը միջնադարյան նշանակալի ժառանգություն է, որը մարմնավորում է մշակութային երկակիությունն ու խաղաղ գոյակցությունը: Սակայն տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական լարվածությունը եւ բնապահպանական խնդիրները պահանջում են անհապաղ միջամտություն: Վանական համալիրի վերականգնումն ու հանրահռչակումը կարող են նպաստել տարածաշրջանային կայունությանն ու հաշտեցմանը՝ ժառանգությունը վերածելով խաղաղության եւ առաջընթացի ռեսուրսի:

«ԳՐԵՄՄԻ» 2025

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Փետրվարի 2-ին Լոս Անջելեսում կայացավ ամենամյա «Գրեմմի» 2025 երաժշտական իրադարձությունը:

Հանրահայտ երգչուհի Բեյոնսեն այս տարի բացարձակ առաջատար է եղել՝ ունենալով 11 անվանակարգ, սակայն հաղթել է միայն երկուսում: Բեյոնսեն հաղթել է «Լավագույն քանթրի ալբոմ» անվանակարգում եւ դարձել է առաջին սեւամորթ կատարողը, որը երբեւիցե հաղթել է այդ անվանակարգում:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է մրցանակ ստացած երգիչներին:

Այսպիսով, տարվա երգ անվանակարգում հաղթել է Քենդրիք Լամարը, իր Not Like Us երգով: Տարվա ձայնագրություն անվանակարգում կրկին հաղթել է Քենդրիք Լամարը նույն երգով: Քենդրիքը նաեւ մրցանակ է ստացել լավագույն ռեփ ելույթի, տարվա ռեփ ստեղծագործության համար:

Լավագույն փոփ զուգերգում մրցանակ են ստացել Լեդի Գագան եւ Բրունո Մարսը, իրենց Die With a Smile երգով, որը կարճ ժամանակահատվածում դարձել է սիրված եւ ճանաչված:

Լավագույն լատինաամերիկյան ալբոմ անվանակարգում, բնականաբար, հաղթող է ճանաչվել լեգենդար Շակիրան իր Las Mujeres Ya No Lloran երգով:

Այս տարի նոր արտիստների պակաս եւս չի եղել, եւ տարվա նոր արտիստ անվանակարգում հաղթող է ճանաչվել Chappell Roan-ը:

Լավագույն փոփ վոկալային ալբոմ անվանակարգում հաղթող է ճանաչվել եւ մրցանակ ստացել Սաբրինա Քարփենթերը Short n՛ Sweet երգով:

Դե էլ ինչ երաժշտական մրցանակաբաշխություն՝ առանց ռեփի: Լավագույն ռեփ ալբոմ անվանակարգում հաղթել է Doechii-ն Alligator Bites Never Heal ստեղծագործությունով:

Լավագույն փոփ սոլո ելույթի հաղթող եւ մրցանակակիր է դարձել Սաբրինա Քարփենթերը իր Espresso երգով, որն ի դեպ, լայն տարածում եւ ճանաչում է ստացել ամբողջ աշխարհում:

Շարունակելով ցանկը՝ պետք է առանձնացնել լավագույն պարային ալբոմ անվանակարգը, որի համար մրցանակ է ստացել Charli xcx-ը իր Brat կատարմամբ:

Լավագույն ռոք ելույթ անվանակարգին է արժանացել «Բիթլզ» խումբը Now and Then կատարմամբ: Մրցանակը եւս մեկ անգամ փաստում է այն մասին, որ խումբը մինչ օրս համարվում է լեգենդար:

Լավագույն ալտերնատիվ ալբոմ անվանակարգում հաղթել է St Vincent-ը, իսկ լավագույն քանթրի սոլո ելույթ անվանակարգում՝ Chris Stapleton-ը It Takes a Woman ստեղծագործության համար:

Էլ ի՞նչ «Գրեմմի» առանց SZA: Սիրված երգչուհին հաղթել է Լավագույն R&B երգ անվանակարգում իր Saturn երգով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈՍԱՆ» ՀԱՂԹԱՆԱԿ Է ՏԱՐԵԼ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽԱՂՈՒՄ

«Նոսան» Դոհայում ընթացող ուսումնամարզական հավաքի շրջանակում ստուգողական հանդիպում է անցկացրել «Ալ Մաշաֆ» թիմի հետ եւ 8:0 հաշվով հաղթանակ տարել:

Դուբլի հեղինակ է դարձել Գրենիկ Պետրոսյանը, մեկական անգամ աչքի են ընկել Զավեն Խուդավերդյանը, Գոնսալո Գրեգորիան, Մաթեուս Այասը, Հելդեր Ֆերեյրան, Բրայան Մենդոզան եւ Բրունո Ալմեյդան: Վերջինս իր առաջին գոլն է խփել «Նոայի» կազմում:

Ուսումնամարզական հավաքի շրջանակում «Նոան» ավելի վաղ 2:1 հաշվով առավելության էր հասել «Զենիթի» նկատմամբ:

«Նոայի» ուսումնամարզական հավաքը կտեւի մինչեւ փետրվարի 10-ը:

«ԱՐՍԵՆԱԼ»-Ը 5-1 ՀԱՇՎՈՎ ՀԱՂԹԵԼ Է «ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻ»-ԻՆ

Անգլիայի Պրեմիեր լիգայի 24-րդ տուրի կենտրոնական խաղում Լոնդոնի «Արսենալը» «Էմիրեյթսում» գերվստահ հաղթանակ տարավ «Մանչեսթեր Սիթիի» նկատմամբ (5:1):

«Զինագործների» կազմում աչքի ընկան Մարտին Էդեգորը, Թոմաս Փարթին, Կայ Հավերցը, Իթան Նվաներին եւ Մայլս Լյուիս-Սկելին՝ վերջինիս համար այս գոլը առաջինն էր լոնդոնյան գրանդի կազմում: «Քաղաքայինների» միակ գոլը հեղինակեց թիմի նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդը:

Այս խաղից հետո «Արսենալը» միավորների քանակը հասցրեց 50-ի եւ բարձրացավ 2-րդ հորիզոնական: «Մանչեսթեր Սիթին» 41 միավորով եզրափակում է լավագույն քառյակը:

«ԻՆՏԵՐ»-Ը «ՄԻԼԱՆ»-Ի ԴԵՄ ԽԱՂՈՒՄ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Իտալիայի Ա Սերիայի 23-րդ տուրի խաղում «Միլանը» «Սան Սիրոյում» մարտական ոչ ոքի խաղաց «Ինտերի» հետ (1:1):

«Ռոսոներիի» 45-րդ րոպեին հանդիպման հաշիվը բացեց հոլանդացի կիսապաշտպան Տիջանի Ռեյնդերսը: Խաղի հիմնական ժամանակին ավելացված 3-րդ րոպեին Ռեյնդերսի հայրենակից Ստեֆան դե Վրայը հավասարեցրեց հաշիվը՝ փրկելով իր թիմին պարտությունից:

Հայաստանի ազգային հավաքականի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը 76 րոպե անցկացրեց «Ներաձուրիի» կազմում:

Այս խաղից հետո «Միլանը» միավորների քանակը հասցրեց 35-ի ու այժմ 8-րդն են: «Ինտերը» 51 միավորով 2-րդն է:

● *Փետրվարի 15-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «5+1 պատմություն սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը վճարվել լիազորագրով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչ ժամկետում է վճարվում չվճարված կենսաթոշակի գումարը:

Արուսյակ Վարդանյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կենսաթոշակը վճարվում է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում, նաեւ այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով: Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակառուն ներակայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե գործուղման դեպքում գիշերավարձի գումարը փաստաթղթով հիմնավորված չէ, ապա տվյալ գումարը ենթակա՞ է նվազեցման գործուղման մեկնած ֆիզիկական անձի համախառն եկամից:

Լիանա Գաբրիելյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի եւ 16 ապրիլի 2001թ. N 02/456 հրամանի 12.2.-ի համաձայն՝ փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ չափերով տրվող փոխհատուցումները, մասնավորապես՝ գործուղման վճարները:

Համախառն եկամտից նվազեցվում են ՀՀ տարածքում եւ ԼՂՀ գործուղվելու դեպքում ոչ պետական եւ ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար ՀՀ կառավարության 29.12. 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի եւ ճանապարհածախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի եւ ճանապարհածախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

ՀՀ ՊԵԿ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ օտարերկրյա գործուղումների դեպքում գիշերավարձի փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը փոխհատուցվում են նշված որոշմամբ տվյալ երկրի համար սահմանված գիշերավարձի նվազագույն նորմայի 70% սահմաններում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Համահայկական ձմեռային երկրորդ խաղերի շրջանակներում մեկնարկեց հոկեյի մրցաշարը, որն անցկացվում է մայրաքաղաք Երեւանում:

Հոկեյի մրցաշարն անցկացվում է շրջանաձեւ մրցակարգով, որին մասնակցում են 4 թիմեր՝ Վոլգոգրադից, Մոնրեալից, Դոնի Նախիջեւանից ու Երեւանից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 - 2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*